ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 31.10.2023թ. հարցման

Հարգելի տիկին Ղազարյան

ՀՀ Լոռու մարզում ժամանակավոր բնակեցվել են Լեռնային Ղարաբաղից տարահանված շուրջ 5100 անձ, որոնք տեղավորվել են հյուրանոցներում, անհատ բնակարաններում, պետական և համայնքային հաստատություններում: Նրանց սոցիալական խնդիրները լուծելու համար ՀՀ կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն որոշմամբ մարզպետի աշխատակազմին հատկացվել է 30.0 մլն. դրամ, որից՝ «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով՝ 20.0մլն. դրամը, «Այլ նպաստներ» հոդվածով՝ 10.0 մլն. դրամ: «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով հատկացված գումարների ծախսման համար «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքվել է գնման 5 պայմանագրեր, համաձայն որի ձեռք է բերվել 1345 փաթեթ և համայնքների միջոցով բաշխվել է տարահանված բնակչությունը: Փաթեթների մեջ ներառված են սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաներ: Նախատեսված 20.0 մլն. դրամից այս պահի դրությամբ մատակարարներին վճարվել է 19.6 մլն. դրամը: Բաշխման աշխատանքերը ընթացքի մեջ են, ավարտելուց հետո կվճարվի նաև մնացած գումարը:

Համայնք	Մատակարար	Փաթեթների քանակ	Միավորի գին	Գումար
Սպիտակ	Գագիկ Ղորուխչյան ԱՁ	366	14200	5197200
Ալավերդի	«Հաշ Գրուպ» ՍՊԸ	224	15200	3404800
Ստեփանավան, Լոռի Բերդ	«ԴԱՎՔ-ԳՐԻԳ» ՍՊԸ	368	15200	5593600
Գյուլագարակ	Ալիկ Այվազյան ԱՁ	26	15100	392600
Թումանյան	Էլլա Պողոսյան ԱՁ	14	14700	205800
Վանաձոր, Փամբակ	Արմեն Աղաջանյան ԱՁ	347	15000	5205000

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4-34 99

«Այլ նպաստներ» հոդվածով տրամադրված 10.0մլն. դրամով կարգավորվել և լուծվել են բազմաթիվ խնդիրներ՝ տարահանված բնակիչների սոցիալական հարցերի լուծման համար: Տարբեր կազմակերպությունների միջոցով գնվել և տրամադրվել են տարահանված բնակիչներին նյութական օգնություններ՝ սննդամթերք, առաջին անհրաժեշտության ապրանքներ, դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքներ, մանկական տակդիրներ, կենցաղային ապրանքներ և այլն:

ՀՀ կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն որոշմամբ մարզպետի աշխատակազմին հատկացված գումարները հիմնականում ուղղվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում և անհատ բնակարաններում բնակվող քաղաքացիների սոցիալական խնդիրների լուծմանը:

Հարգանքով՝

03/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4-34 99